

- Ք. Առաւօտին աղօթք՝ Դ. դարից, Առաւօտեան ժամ՝ ժ.Դ. դարից
- Գ. Առաւօտին աղօթք՝ Ե. դարից, Արեւագալ՝ ժ.Ա. դարից, Արեւագալի ժամ՝ ժ.Դ. դարից:

Ճաշու ժամ՝ ժ. դարից.


- Դ. Երրորդ ժամ՝ Դ. դարից.
- Ե. Վեցերորդ ժամ՝ « »
- Զ. Իններորդ ժամ՝ « »

Երեկոյեան ժամ՝ Դ. դարից.

- Է. Երեկոյեան ժամ՝ Դ. դարից.
- Ը. Հանգստեան ժամ՝ Է. դարից, Խաղաղական ժամ՝ ժ.Դ. դարից.
- Թ. Եկեցե՛ք՝ ժ.Դ. դարից, Հանգստեան ժամ՝ ժ.Դ. դարից.

Եւ այսպէս, մեր բազմաշարքար Ազգի ուրախութեան և տրամուխեան շատ ժամերի մէջ ի կայանս իւրեանց այս Երեք Աղօթից Պատերը և ինն Աղօթից ժամերը միայն դարէցդար անշարժ և անփոփոխ մնալով, անշարժ և անփոփոխ էլ կան և այժմ իրենց տեղերում՝ մեր սուրբ Եկեղեցւոյ մէջ:

Սահակ վարդապետ Ամասունցի.



ԹԻԻՐԻՄԱՅՈՒԹԻԻՆՆԵՐ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

Խոստացանք պարզել այն մի քանի թիւրիմացութիւնները, որոնք մտել են Պրոֆ. Լօօֆսի երկասիրութեան «Արարատ»-ի անցեալ համարում յառաջ բերած հատուածի մէջ: Տեսնենք նախ, թէ որչափ հիմնաւոր է Յարգելի ուսուցչապետի կասկածը մեր Եկեղեցւոյ նախնականութեան մասին:

Յիրաւի ժամանակակից պատմագիտութիւնը չի կարող իբրև պատմական վաւերաթղթեր ընդունել այն վկայարանութիւն-

ներքոյ որոնք մեզ տեղեկութիւն են տալիս ս. Քարդուղիմէոս և ս. Քաղէոս առաքեալների գործունէութեան մասին, և նոյն իսկ Աերուբնայի պատմութիւնը, իբրև ուշ ժամանակի զբուժուածք, աւելի մեծ արժէք չունի նորա աչքում: Սակայն եթէ մենք առաքելական շրջանի պատմութիւնը միայն ժամանակակից յիշատակարաններով կազմել կամենանք՝ պէտք է ընդունենք (ինչպէս և յաճախ բողոքական աստուածաբաններն ընդունում են), որ Երկոտասան առաքեալները գրեթէ ոչինչ չեն արել քրիստոնէութիւնը հեթանոս աշխարհի մէջ տարածելու համար, այլ միայն Պողոս առաքեալն է քարոզել և միայն նորա քարոզութեան վայրերում՝ դէպի հիւսիս և արևմուտք Պաղեստինից, տարածուած է եղել քրիստոնէութիւնը առաջին դարում: Մինչդեռ իրողութիւնն այն է ի հարկէ, որ քարոզել են բոլոր առաքեալները՝ թէպէտ երևի պակաս յաջողութեամբ և աւելի սահմանափակ շրջանում քան «ընտրութեան անօթ» հեթանոսաց մեծ առաքելը, — և որ յամենայն դէպս նոցա քարոզութեան ասպարէզ եղել են արեւելեան երկիրներ և ս. բայց միջավայրի ներկայացրած ձախող պայմանների շնորհիւ գրաւոր յիշատակարաններ այդ մասին չեն պահուել: Յետոյ կազմուած աւանդութիւնը եթէ ճշգրիտ պատմութիւն չէ՝ պէտք է ենթադրել զոնէ, որ բոլորովին զուրկ չէ պատմական հիմունքից: Յատկապէս Հայաստանի նկատմամբ յայտնի է, որ առաքելոց ժամանակ սերտ կապեր ունէր նա Պաղեստինի հետ. շատ ժամանակ չէր անցել այն օրից, երբ Տիգրան Մեծի յաղթական զօրքերը սպառնում էին շարժակայքի հետ այդ երկրին և սիրելու. բազմաթիւ հրէայ գաղթականութիւններ հաստատուել էին մեր երկրում և հարկաւ ամէն յարաբերութիւն բուն հայրենիքից չէին կարել. Հայաստանը Հռոմի գերիշխանութեան ներքոյ էր գտնուում այժմ և նոյնքան մատչելի էր քրիստոնեայ քարոզիչներին, որչափ կայսերութեան այլևայլ նահանգները. — ինչպէս կարելի էր ուրեմն, որ նոքա մինչև Հռոմ և Սպանիա հասնէին, ու այստեղ ոտք չդնէին: Այն հանգամանքը, որ 265 թ. ին վախճանած Նիոնիսիոս Աղէքսանդրիոյ եպիսկոպոսը Հայոց Մեհրուժան եպիսկոպոսին թուղթ է գրել՝ ոչ միայն ասպար-

ցուցանում է, թէ ուրեմն «Գ» դարում Հայաստանի մէջ քրիստոնեաներ կային, այլ թէ քրիստոնէութիւնը խիստ վաղ էր տարածուել այդտեղ և ամուր արմատներ բռնել մինչ արդէն կազմակերպուած համայնքներ կային, ծանօթ նոյն իսկ հեռաւոր Աղէքսանդրիոյ եկեղեցուն և զուցէ նոյնպիսի գրութեան մէջ, ինչպէս էին Ասորիքի և Փոքր Ասիոյ հնագոյն համայնքները: Ապա թէ ոչ բոլորովին անհասկանալի կլինէր, թէ ինչպէս զարի վերջում բաւական եղաւ թագաւորի և մի քանի իշխանների դարձը, որպէս զի ամբողջ աշխարհը կարճ միջոցում քրիստոնեայ դառնար՝ այնչափ ջերմեռանդ քրիստոնեայ, որ մի քանի տարի յետոյ, ՅԱԶԹ, ին պատերազմ էր վարում իւր նոր հաւատի պաշտպանութեան համար\*, և 100 տարի յետոյ հազիւ սակաւութիւ հեթանոսներ էին մնացել նորա մի քանի խուլ անկիւններում: այն ինչ Աթէնքի պէս կենտրոններում դեռ Զ. դարու միջոցներին հեթանոսներ կային: Ապա ուրեմն բոլոր պատմական հանգամանքները մեզ իրաւունք են տալիս հաստատելու որ «մինչև առաքեալների ժամանակ հայ — քրիստոնէութիւնը հասնւած է»: Եւ այնուամենայնիւ նա այնպէս հրաշալի կերպով հանդէս եկաւ Գ. դարու վերջին իբրև պաշտօնական կրօն, այնչափ արագ տարածուեցաւ և այնպիսի ինքնուրոյն բնաւորութիւն ստացաւ, որ Հայերը պէտք է նախախնամութեան մի առանձին տնօրինութիւնը համարէին այդ ամէնը և իրենց համար մի առանձին շնորհակէտէին դորա մէջ: Փամանակի քաղաքականութիւնն ևս զուցէ կարևոր դեր է կատարել հայ — քրիստոնէութեան տարածման գործում, բայց ո՛չ անշուշտ այնպիսի բազմակողմանի դեր, որ ո՛չ մի նշանաւոր քաղաքագէտի հանձար ո՛չ մի երկրում չի կատարել:

Երկրորդ կարևոր խնդիրը, որ սերտ կապ ունի նախընթացի հետ, Հայոց հայրապետական աթոռի սկզբնական գրութիւնն ու իրաւասութիւնն է: «Ո՛չ թէ, Եջմիածնի տաճարը, այլ Տարօն գաւառի Աշտիշատում, ազգային հեթանոսա-

\* Մաքսիմիլիանոս Գայա Կեսարի դէմ, ըստ Եւսեբիոս Կեսարացու անժխտելի վկայութեան:

կան սրբութիւններն տեղ կառուցած Քրիստոսի եկեղեցին էր սկզբում։ Մայր ամենայն եկեղեցեաց Հայոց», — այս կարծիքը պրոֆ. Լ. Օսթիս առել է Պեյցէրի «Հայկական եկեղեցւոյ սկզբնաստորութիւնն» գրքից\*, որ իւր կողմից հիմք է ընդունում Փաւստոսի խօսքերը և Գուտշմիդի այն տեսութիւնը, թէ ս. Լուսաւորչի տեսիլը մի կեղծիք է, «ի պարծանս Վաղարշապատի եկեղեցւոյ» շարագրուած Ե. դարում, Վարդանանց պատերազմից յետոյ, — Ե՛րբ է արդեօք Վաղարշապատը առաջին անգամ հայրապետութեան աթոռանիստ դարձել՝ Պեյցէր իւր գրքում չի ասում, և չի նկատում, թէ ինչպիսի հակասութիւն է պնդել՝ «հաւանականաբար այն ժամանակ միայն հնարուեցաւ Վաղարշապատու գրոյցն կամ աւանդութիւնն, երբ որ իսպառ ընդհատեցաւ Կեսարիոյ հետ ունեցած յարաբերութիւնն», և ընդունել սակայն որ ամբողջ Գ. դարում, այսինքն այդ յարաբերութիւնը ընդհատելու ժամանակ և դեռ տասնեակ տարիներ յետոյ «Վաղարշապատ չէր Հայաստանի հոգևոր մայրաքաղաքը»՝ «բոլորովին զուրկ լինելով հոգևոր կամ սրբազան յատկութենէ»\*\*։ Աւելին երբ Հայերը Կեսարիոյ աթոռի հետ ունեցած յարաբերութիւնը ընդհատեցին\*\*\* և կամենալով՝ ըստ Պեյցէրի, մի փաստ գտնել, որ հաստատեն իրենց հայրապետութեան սկզբից և եթ անկախ լինելը՝ գրոյց ու տեսիլ հնարեցին, — այդ գրոյցը տարօրինակաբար բուն «Հայաստանի հոգևոր մայրաքաղաք» Աշտիշատի հետ չկապեցին, այլ «սրբազան յատկութենէ բոլորովին զուրկ» և երբէք հայրապետական աթոռանիստ չեղած մի տեղի հետ։ Բայց այսպիսի տարօրինակութիւններ տեղի ունենալ չեն կարող։ Եթէ

\* Die Anfänge der armenischen Kirche, von H. Gelzer. Sonderabdruck aus den Berichten der Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften. Sitzung vom 4 Mai 1895. Հայերէն թարգմ. — Վենետիկ, 1866.

\*\* Տես. Վերջինս, էջ 58 համ. 64:

\*\*\* Արդէն 367 թ. — Երբ առաջ, եթէ Կեսարիայում չձեռնադրուած առաջին կաթողիկոս Չունակին համարենք, կամ 373 թ. — Ին, եթէ Յուսիկ Բ. — Ին:

Հայոց եկեղեցւոյ անկախութիւնը հաստատող զրոյցը գին պէտք է ունենար ժամանակակիցներէ աչքում, անշուշտ իբրև աթոռանիստ պիտի յիշուէր նորա մէջ այն տեղը, ուր նոցա օրով և նոցա յիշողութեան հասած ժամանակից ի վեր գանուում էր հայրապետական աթոռը: Եւ եթէ իրօք ս. Լուսաւորչի տեսիլը իւր այժմեան կազմութեամբ Վարդանանց պատերազմից անմիջապէս յետոյ է խմբագրուած՝ նորա նպատակը պէտք է լինէր ո՛չ թէ չունեցած «հոգևոր յատկութիւններ» վերագրել Վաղարշապատին, այլ նուիրագործել այդ յատկութիւնները և ազատել մոռացուելու վտանգից, որ սպասելի էր նոյն այդ ժամանակ աթոռի Վաղարշապատից Դուին փոխադրուելու պատճառով:

Ճշմարիտ է, Փաւստոս շատ անգամ Աշտիշատի եկեղեցին «մեծ, առաջին և մայր եկեղեցեաց» անուանում է և շահագործում այն փաստը, որ իրօք՝ Ազաթանգեղոսի վկայութեամբ, ս. Լուսաւորիչ Աեսարիայում ձեռնադրութիւն ընդունելուց և վերադառնալուց յետոյ առաջին եկեղեցին Աշտիշատում էր կառուցել: Սակայն նոյն իսկ Փաւստոսի Տարօն դաւառի համար ցոյց տուած ակներև պեղան հայրենասիրութեան այս արտայայտութիւնները վկայում են, որ նա Աշտիշատը հայրապետական աթոռանիստ չի համարել:— «Զայնու ժամանակաւ երբեք հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայր եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու» \*— ուստի «երթեալ» արդեօք: Ընդունենք թէ «եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբ» ամի ամի եւթն անգամ՝ այդտեղ ժողովուում տօն էին կատարում, որ հարկաւ Փաւստոսեան չափազանցութիւն է այնուամենայնիւ չէ՞ որ նոքա ուրիշ տեղից էին դալիս, և ուրեմն հայրապետանոցը այս եկեղեցին չէր: «Զատախձան գլխաւորութեան Տարօնոյ, ի մեծն և նախ դառաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց» \*\*— ունէր

\* Փաւստոս (Ս. Պետերբուրգ, 1883), Գ. դպ. Գ. դ. էջ 7:

\*\* Փաւստոս Գ. դպ. ԺԴ. դ. էջ 32:

ս. Յուսիկի ժամանակ Ղանիէլ քորեպիսկոպոսը որին կամե-  
նում էին նորա տեղը նստեցնել նորա նահատակութիւնից  
յետոյ: Ուրիշ խօսքով այս եկեղեցին իւր յարակից սրբալայ-  
րերի և շրջապատող գաւառի հետ մի առանձին թեմ էր  
կազմում որ և ունէր իւր առանձին կառավարիչը և որով-  
հետեւ «իշխանութիւն աթոռոյն հայրապետացն» էր՝ այսինքն  
Լուսաւորչի առհմի սեփական կալուածք\*, հաւանականաբար  
այդ պատճառաւ և նորա կառավարիչը միայն քորեպիսկոպո-  
սութեան աստիճան ունէր: Ըստ Փաւստոսի ս. Լուսաւորչի  
թոռները «հնգետասան գաւառ ձեռական իշխանութեան  
ունէին իրրեւ սեպհական ի բնակ»\*\*, որոնց մէջ առաջին տեղը  
բռնում էր Այրարատը. իրենք էլ բնականաբար այդ գաւա-  
ռում էին նստում, իսկ միւսները կառավարում էին երեւի  
քորեպիսկոպոսներով: Անշուշտ այդ բոլոր գաւառները կա-  
տարեալ սեպհականութիւն չէին, այլ միայն հայրապետի ան-  
միջական իշխանութեան ներքոյ գտնուող թեմեր՝ եկեղեցական  
իմաստով. բայց Աշտիշատն այնպիսի սեպհականութիւն էր, որ  
ս. Լուսաւորչի ոչ աշխարհական ժառանգներն ևս տիրում  
էին այնտեղ և կերուխումի ասպարէզ դարձնում\*\*\*: Ու-  
րեմն հայրապետները միայն տեղի սրբութեան համար չէին  
յաճախ Աշտիշատ գալիս, այլ նաև իրենց թեմը, իրենց սեպ-  
հական կալուածքը լինելուն համար, և այդ յաճախակի այ-  
ցելութիւնները քիչ չէին նպաստում նորա սրբալայրերի

\* Տես. նոյն. Գեղեցի թարգմանում է՝ „der Hauptaltar, der Fürstenthron der Patriarchen“. հայ թարգմանիչը իտիսադրում է. «Գլխաւոր սեղան, աթոռ իշխանութեան հայրապետացն». մինչ-  
դեռ բնագրի բառերն են՝ «այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանու-  
թեան աթոռոյն հայրապետացն»: Փաւստոս ուզում է ասել, թէ  
Ղանիէլ, Աշտիշատի քորեպիսկոպոս լինելով հայրապետական ա-  
թոռին պատկանող տեղերի «հաւաարեմն» ու պահապանն էր.  
Իսկ թարգմանիչները դարձնում են նորան աթոռի կամ «գահ»ի  
(Թափոնը արդեօք, թէ բռնուած) պահապանը, որով Աշտիշատն  
էլ հեշտութեամբ հայրապետաց աթոռանիստ է դառնում:

\*\* Փաւստոս Գ. դպ. ժԳ. գԼ. էջ 97:

\*\*\* » Գ. դպ. գԼ. ժԹ. էջ 41:

նշանակութիւնը բարձրացնելուն: Այնուամենայնիւ այնտեղ հայրապետանոց չկար, այլ միայն «եպիսկոպոսանոց»\*, ուր նստում էր թեմի կառավարիչն, իբրև իսկական եպիսկոպոսի՝ հայրապետի փոխանորդը:

Իսկ ո՞ւր էր հայրապետանոցը.—ըստ Գեղցեբի՝ Արտաշատում, որովհետև Փաւստոս նկարագրելով ս. Յուսիկի դարձը կեսարիայից և Տիրան թագաւորի նորան ընդառաջելը՝ ասում է. «Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ Արտաշատ, յեկեղեցին դառնային» և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական»\*\*: Բայց նախ՝ հարց է թէ «յեկեղեցին դառնային» խօսքերը յայտեղ ի՞նչ են նշանակում. այսպէս բացարձակ կերպով յիշուած՝ նորա չէն ակնարկում արդեօք մի եկեղեցի, որ բոլորին ծանօթ էր, որի մասին կմտածէին իսկոյն բոլոր ժամանակակիցները: Եթէ Տիրան Վաղարշապատից էր ելել հայրապետին ընդառաջելու համար, ինչո՞ւ այնպէս չհասկանալ, թէ նորա երասին անցնելուց յետոյ առաջ ճանապարհի վերայ դրանուած Արտաշատ քաղաքը մտան, ու յետոյ վերադարձան հայրապետական եկեղեցին՝ Վաղարշապատի մայր տաճարը: Երկրորդ՝ ընդունելով հանդերձ թէ խօսքը Արտաշատի եկեղեցւոյ մասին է, մի՞թէ փաստ կարող է լինել այդ, որ ամբողջ Գ. դարում հայրապետական աթոռը Արտաշատում էր գտնուում: Եկեղեցի մանկն ուրիշ խնդիր է, հայրապետական աթոռ բարձրանայն ուրիշ. Փաւստոս մի քանի տող վերև արդէն՝ դեռ ս. Յուսիկի կեսարիայում եղած միջոց, նորա ձեռնադրութիւնը պատմելով ասում է. «նստուցին զնա յաթոռն Առաքելոյն Թադէոսի, և յաթոռ իւրոյ հաւուսն մեծին Գրիգորի». ընդունենք ուրեմն, որ կեսարիան ևս նորա

\* Տես. նոյն տեղ:

\*\* Փաւստոս. Գ. դպ. թԲ. դլ. էջ 26.—Գեղցեբ, Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն. էջ 63: Ծիծաղելի է թարգմանիչ Հ. Թորոսեանի զխտադութիւնը, թէ Արտաշատ այստեղ «թերևս ձեռագրի վրկպակ լինի փոխանակ Աշտիշատ գրուելու»:

աթոռանիստն էր: Անշուշտ ինչպէս այս, այնպէս և միւս  
 դէպքում ահա նսպէշնէլը գաղափարական մտքով է հաս-  
 կացուած: Կեսարիայից վերադարձող հայրապետը ո՛ր եկեղե-  
 ցին էլ մտնէր՝ ս. Լուսաւորչի աթոռի վերայ պէտք է նստէր:  
 Արտաշատը կարող է այն դէպքում միայն երկար ժամանա-  
 կով աթոռանիստ եղած լինել ս. Յուսիկի համար, եթէ նա  
 միանգամայն Տիրանի արքայանիստն էր, որովհետեւ թէ Փաւս-  
 տոս և թէ նորանից յետոյ եկող պատմիչները ո՛չ մի կաս-  
 կած չեն թողնում, որ Հայոց հայրապետները երկրի մայրա-  
 քաղաքում էին նստում միշտ՝ Գ. դարում նոյն խակ թա-  
 դաւորի հետ տեղից տեղ էին փոխուում, նորա բանակում  
 պաշտօն կատարում\*, նորա սեղանն օրհնում\*\*, Բայց մենք  
 միայն այնչափը զիտենք, որ Տիրան սովորաբար հար. Հայաստա-  
 նում էր լինում, օր. Թովաց գաւառի Բնաբեղ բերդում\*\*\*,  
 Աղձնեաց Բառաէջ աւանում\*\*\*\*, և ո՛չ մի վաւերական յի-  
 շատակութիւն չունենք հաստատելու համար, թէ Գ. դարում  
 բայց Վաղարշապատից մի ուրիշ քաղաք երկար տեղոզ-  
 թեամբ մայրաքաղաք և արքայանիստ եղել է: Յամե-  
 նայն դէպս դարի սկզբում՝ Տրդատ Մեծի օրով, և դարի  
 վերջում Արշակ Գ. ի, Խոսրով Գ. ի և Առամշապուհի ժա-  
 մանակ, Վաղարշապատն է եղել հաստատուն արքայանիստը,  
 և թէպէտ Խոսրով Կոտակ, ս. Տրդատի որդին, Գուինը շէ-  
 նացրեց և այնտեղ ապարանք կառուցեց իւր համար†, բայց  
 այդ տեղիք որսոց զբօսանաց ուրխութեան թաղաւորու-  
 թեան նորա, էին, և ամենայն հաւանականութեամբ ††  
 թէ նա և թէ նորա յաջորդները շարունակում էին Վաղար-  
 շապատը նկատել իբրև իրենց պետութեան բուն մայրաքա-  
 ղաքը՝ որչափ և այս խռովայոյզ ժամանակներում հարկը  
 ստիպէր նոցա երբեմնապէս երկրի, ազգմական կամ քաղա-

\* Փաւստոս Գ. դպ. ժե. գլ. էջ 100:

\*\* Ե. Գպ. ԻԹ. գլ. էջ 190:

\*\*\* Գ. Գպ. ժԲ. գլ. էջ 28:

\*\*\*\* Նոյն ժԳ. գլ. էջ 33:

† Փաւստոս Գ. դպ. Ը. գլ. էջ 16:

†† Համ. նոյն է. գլ. էջ 15:

քական տեսակէտից կարեւոր՝ այս կամ այն վայրում հաստատել արքունիքը:

Ղազար Փարպեցին, որի արժանահաւատութեան մասին կասկած չինել չի կարող, նկարագրելով Արշակ Գ.-ի տեղափոխութիւնը (390 թ.-ին) Այրարատեան գաւառից դէպի Յունաց բաժնի Հայաստան՝ նորա թողած պատուական տեղերի շարքում յիշում է. «Զբնիկ սեպհական կալուած ևս ազգին Արշակունեաց՝ զքաղաքն Ղազարշապատ, զբնակութիւն ոստանին Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ շինուածս անթիւ ապարանացն, զանյազ զամենայի դաշտացն զբերկրումն, զհրեշտակացոյց հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ՝ մեծի եկեղեցոյն և զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն...»\*: Արդ, պարզ է որ այդ ժամանակ Ղազարշապատը նոր չէր Արշակունեաց ոստան դարձել և նոր չէր նորա մէջ «մեծ եկեղեցին» կառուցուել: Եթէ Ազաթանգեղոսի պատմութիւնը՝ իւր պատմական և ոչ պատմական համարուած մասերով, դոյութիւն իսկ չունենար, բաւական էր մեզ այն անհերքելի իրողութիւնը, որ Հայոց առաջին քրիստոնէայ թագաւորի մայրաքաղաքը Ղազարշապատն է եղել՝ որպէս զի մենք անհրաժեշտաբար հետեցնելինք, թէ ուրեմն նա եղել է նաև Երեսնամյա առաջին հայրապետի համար և առաջին «կաթողիկէն»՝ հայրապետական առաջին մայր եկեղեցին, այնտեղ է կառուցուել:

Իեղէր առանձին կարեւորութիւն է տալիս այն փաստին, որ Փաւստոս, Հայաստանի սրբավայրերը թուելով՝ Ղազարշապատի մայր եկեղեցին չի յիշել: Պատմիչը խօսում է նորա ակնարկած տեղում\*\* Աշտիշատի սրբութիւններին արուած պատուի մասին և աւելացնում է. «Որպէս ի Գարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորգանու պատուեն վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի: Սոյնպէս և զյիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամօք և թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախածանօթ ի Քրիստոսն»:

\* Փարպեցի, Պատմութիւն. Վենետիկ էջ 28:

\*\* Փաւստոս. Գ. դպ. ԺԳ. գլ. էջ 32:

հաւատոց ... Նոյնպէս և զյառաջեպիսկոպոսն զնախավաստակըն զԳրիգորիս, սոյնպէս և ի գաւառն Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայանէն և Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն, սոյնպէս առաւել և զնախակեղեցին»։ Սակայն այս աղաւաղ և սխալ կէտադրութեամբ շարուած խօսքերն ևս մի քանի բացատրութիւն վերցնել կարող են։ ա) «Գայանէն և Հռիփսիմէն» յիշելուց յետոյ անմիջապէս՝ «սոյնպէս առաւել և զնախակեղեցին» աւելացնելիս արդեօք հեղինակի միտքը կամայ կամ ակամայ Վաղարշապատի մայր եկեղեցու վերայ չի՞ զնացել։ Հարկաւ խօսքի տրամաբանական կապն ու այն հանգամանքը, որ Փաւստոս «առաջին եկեղեցի» ասելով միշտ Աշտիշատի տաճարն է հասկանում, ստիպում են աւելի ընդունել, թէ նա այդտեղից արդէն խօսքը Աշտիշատի վերայ է դարձնում, բայց աններելի չէ ենթադրել, թէ այս դէպքում Այրարատեան գաւառի միւս սրբավայրերի շարքի մէջ յիշուել է բացառաբար նաև այն, որ իսկական մտքով «նախակեղեցի» էր, որ թէպէտ Աշտիշատի տաճարից յետոյ էր կառուցուել, բայց աւելի վաղ հանդիսարան եղել Քրիստոսի խաչի տարած յաղթութեան։ բ) Ամենեին զարմանալի չպէտք է լինի, թէ ինչո՞ւ Փաւստոս Վաղարշապատի մայր եկեղեցին չի դնում այնպիսի սրբավայրերի հետ, որոնք իբրև նահատակների նշխարաց տեղիք կամ քրիստոնէական յիշատակներով սրբագործուած հեթանոսական ուխտատեղիք իրենց նշանաւոր տօներն ունէին և ուխտաւորների բազմութիւն էին գրաւում։ Ս. Եջմիածինը մինչև այսօր էլ իսկական մտքով ուխտատեղի չէ. հայրապետութեան աթոռ և վերին նախասահմանութեամբ Հայոց եկեղեցական կեանքի կենտրոն լինելն այնպիսի գաղափարներ չեն, որ զիւրաւ ըմբռնուին հասարակ ժողովրդի կողմից և առանձին գրաւչութիւն ունենան։ Շատ կարելի է, որ Վաղարշապատի Մայր եկեղեցին Գ. դարում մեծ ժողովրդականութիւն չունէր և նորա գաղափարական նշանակութեան վերայ սկսան աւելի ուշադրութիւն դարձնել այն ժամանակ, երբ հայր. աթոռի ուրիշ տեղ փոխադրուելը յիշեցնում էր, թէ ինչպէս հրաշալի կերպով հաստատուեցաւ այն իւր նախկին տեղում։

ինչպիսի՛ մեծ երախտիք ունեին հայ ազգի համար առաջիննորա վերայ բազմող ս. Լուսաւորիչն ու իւր սերունդը: Գորանով ոչինչ չի ապացուցանուում: Եթէ նորա չյիշուելը փաստի նէր աթոռանիստ չլինելուն համար, պէտք է հարցնէինք. ինչո՞ւ ուրեմն չի յիշուում Արտաշատի եկեղեցին, որ Գեղէր աթոռանիստ է համարում: գ) Կարելի է հարցնել վերջապէս եթէ Փաւստոս Վաղարշապատի եկեղեցին ամենեկին չի յիշում՝ արդեօք դիտաւորեալ չէ՞ նորա լռութիւնը: Ինչի՞ցն է որ նա տեղի անտեղի Աշտիշատի անունը տալիս խօսք չի գտնում սորա փառաւորութիւնը նկարագրելու, իսկ Գ. դարու Հայոց մայրաքաղաք Վաղարշապատն իւր պատմութեան ամբողջ ընթացքում միայն մի երկու անգամ է հարեանցօրէն յիշում: Խոսքով Կոտակ թագաւոր է նստում և ս. Վրթանէս քահանայապետ, — չի ասած՝ ո՞ւր, նորա ելնում գնում են, — չի ասած՝ ո՞րտեղից. Պարսից և Հայոց մէջ պատերազմ է լինում, Հայոց սպարապետն սպանուում է, «Ապա ժողովէր եպիսկոպոսապետն Վրթանէս, մխիթարէր զամենեւեան», — չի ասած՝ ո՞րտեղ. Խոսքով և Վրթանէս վախճանում են, — չկայ յիշած կրկին, թէ ո՞ւր են ժողովում նոցա թաղման հանդէօր կատարելու, — և այսպէս անվերջ: Պատահական է այս. և եթէ Ե. դարի կէսերին «Վաղարշապատցի մի քահանայ» Վաղարշապատը եկեղեցական կենտրոն դարձնելու նպատակով հնարել է ս. Լուսաւորչի տեսիլը, ինչո՞ւ չի կարող Աշտիշատցի Քրիստոսայ, իւր այժմեան դիրքով զուգէ նոյն այդ ժամանակ խմբագրուած կամ թարգմանուած, Փաւստոսի մէջ ամէն նախապատուութիւն տուած լինել իւր եկեղեցուն՝ զանց անելով դիտամոք Վաղարշապատն ու իսկական «քրիստոսահիմն նախեկեղեցին», որի այդ յատկութիւնները իւրացնել կկամենար: Յամենայն դէպս «կուսակցական ոգի» որոնողը շատ աւելի դիւրութեամբ Փաւստոսի մէջ կգտնէ, քան Ագաթանգեղոսի, որի ո՛չ այս կամ այն բաժնի հեղինակը և ո՛չ ստեղծի խմբագրողը Աշտիշատի փառքը խլելու և մի ուրիշ տեղի յատկացնելու դիտաւորութեան մի հետք անգամ ցոյց չեն տալիս:

Ագաթանգեղոսի պատմութեան ինչ կէտն և կտակածի են-

Թարկուի անկասկածելի է գոնէ այն կէտը որ ս. Լուսաւորիչ եկեղեցիներ էր շինոււմ յատկապէս իւր աւերած մեհնանների տեղերում. իսկ աւերածն սկսել է նա Վաղարշապատից: Զարմանալի է, որ ոչ ոք չի կամեցել ուշադրութեան տունել Սգաթանդեղոսի պարզ յիշատակութիւնն այս մասին. «Իսկ անդէն վաղվաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւն և ամենեցուն հաւանութեամբ գործ ի ձեռն տայր երանելոյն Գրիգորի զի յառաջագոյն զհայրենական հնամեացն նախնոյն և զիւր կարծեալ աստուածսն՝ չաստուածս անուանեալս, անյիշատակս առնել, ջնջել ի միջոյ»: Որտեղ էին Հայոց թագաւորի «հայրենական» աստուածները, եթէ ոչ մայրաքաղաքում՝ Վաղարշապատում: Պատմութեան շարունակութիւնը կասկածի տեղիք չի թողնում. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զԳագինս անահատական զիցն»\*: Վաղարշապատն ուրեմն թէպէտ հին, նշանաւոր, ժողովրդին սիրելի Աստուծոյ բազին չունէր՝ «նոր քաղաք» էր, այնուամենայնիւ իրրեւ քաղաքական կեանքի կենտրոն պէտք է որոշ չափով կրօնական կեանքի կենտրոն ևս լինէր՝ այդ նշանակութիւնը պահէր ու աւելի ընդարձակէր մանաւանդ քրիստոնէութեան օրով, որ աշխարհիս երեսին առաջին անգամ այդ քաղաքում էր բարձրացրել իւր ազատութեան դրօշն ու պետական կրօն հռչակուել: Ինչպէս կարելի էր, որ Հայաստանի Լուսաւորիչն իւր ձեռքով մի եկեղեցի կառուցած չլինէր այդտեղ՝ մի արքունական եկեղեցի, ուր Հայոց թագաւորն ու իշխանները իրենց հայրենական սնտոխ աստուածներին մատուցած պաշտամունքը ճշմարիտ Աստուծուն մատուցանէին, արքունական հանդէսներ կատարէին, և յիշէին միշտ այն բոլոր արտաքոյ կարգի դէպքերը, որոնք տեղի ունեցան այս քաղաքում, մինչև որ ճշմարտութեան լոյսը ծագեց և անձառելի ողորմութեանց մի գուռ բացուեց նոցա համար:

Հայոց եկեղեցւոյ անկախութեան խնդրին գալով՝ մենք

\* Սգաթանդեղոս պատմութիւն, Թեֆլիս, 1882. էջ 451—452:

ամենից առաջ որևէ անմիջական կապ դորա և «Վաղարշապատու զրոյց»-ի մէջ բոլորովին անհաւանական ենք համարում, այն պարզ պատճառաւ, որ «զրոյցը» յառաջ բերող Ազաթանգեղոս բերում է նաև Ղևոնդիոս արքեպիսկոպոսի նամակը և դորանով ցոյց տալիս իրեն ջերմ կուսակից Աեսարիոյ աթոռի ձեռնադրական իրաւանց, Կարելի է առարկել ի հարկէ, թէ ս. Լուսաւորչի տեսիլն ու Ղևոնդիոսի նամակը տարբեր հեղինակների գործ են՝ տարբեր աղբիւրներից առնուած, բայց նոցա առնողն այնչափ հեռաւոր ժամանակում չէք սպրում, որ գաղափար չունենար նոցա հակառակ դիտումների մասին և անտարբեր աչքով նայէր մէկի կամ միւսի վերայ:—Ազաթանգեղոսի և Փաւստոսի համերաշխ վկայութեամբ ս. Լուսաւորչի և իւր յաջորդները մինչև Մեծն Ներսէս Աեսարիա էին գնում եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու. Գեղցէր դորանից հեռեցնում է, թէ ուրեմն այդ ժամանակամիջոցում Հայոց եկեղեցին ենթարկուում էր Աեսարիոյ աթոռին և նորան անկախութիւն տուողն եղաւ Պապ թագաւորը՝ Մ. Ներսէսի մահից յետոյ առանց Աեսարիոյ արքեպիսկոպոսի հաճութեան Յուսիկ Բ.-ին նստեցնելով հայրապետական աթոռի վերայ:—Գծրապղարար յարմարութիւն չունեցանք ստուգելու Գուտշմիդի փաստերի արժէքը, որոնցով նա աշխատել է ս. Լուսաւորչի Աեսարիա գնալու աւանդութեան վաւերականութիւնը հերքել. բայց այն առարկութիւնները, որ Գեղցէր այդ կարծիքի դէմ բերում է՝ շատ թոյլ են: Նա ինքը նկատում է\*, որ ս. Արիստակէս, ըստ Ազաթանգեղոսի, ս. Լուսաւորչից է կաթուղիկոսական ձեռնադրութիւն և իշխանութիւն ընդունել, և Փաւստոս ոչինչ չի յիշում ս. Վրթանէսի Աեսարիա գնալու մասին. բայց փոխանակ անձամբ եզրակացնելու, թէ որչափ խախոււմ հիմք ունի ուրեմն իւր տեսութիւնը՝ զարմանում է, թէ ինչո՞ւ Պապի և Փաւստոսի ժամանակակիցներն այս փաստերը գործ չեն դրել իրրև «Աեսարիայէն ունեցած կախումը և հպատակութիւնը ջնջելու միջոց»: Արդեօք նոցա մտքից

\* Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, էջ. 134:

անցնում էր, թէ Հայոց հայրապետութիւնը հպատակ է եղել երբեկոցէ կեսարիային, կամ «կախումն ու հպատակութիւնը» նորա ձեռնադրութեան անհրաժեշտ հետեանք համարում էին:

Ապա, եթէ ընդունենք որ ս. Լուսաւորիչ և իւր անմիջական յաջորդները կեսարիայում չեն ձեռնադրուել՝ արդեօք միւսների կեսարիա գնայլ բոլորովին ստոյգ պէտք է համարենք: Հաւանական է, որ ամէն մի հայրապետի ձեռնադրութեան համար նախարարների մի ամբողջ բաղմութիւն հետը գնար, այդ երթեկութիւնը մի քանի անգամ կրկնուած լինէր՝ ի միջի այլոց այնպիսի մի ժամանակ երբ Մեծն Բարսեղ զործում էր կեսարիայում, — և ո՛չ մի յիշատակութիւն այս մասին չմնար սորա կամ ուրիշ ժամանակակիցների գրուածներում: Գեղեցիկ յառաջ է բերում ս. Բարսեղի թղթերից մի քանի տեղեկութիւններին, որ Փաւստոս եպիսկոպոսի ձեռնադրութեան առթիւ ծագած վէճի մասին\*. ինչպէ՞ս է որ այդ երկրորդական խնդիրը «յաճախ» յիշատակուում է նորա թղթերի մէջ, իսկ ամբողջ Հայաստանի նորա իրաւասութեան սահմանից ելնելու կարեւոր խնդիրը ամենեւին չի յիշուում. ինչպէ՞ս նա մի ակնարկ չի անում այդ մասին գոնէ ներկայ դէպքում՝ Հայոց մի եպիսկոպոսի ձեռնադրութեան և այդ նկատմամբ իւր աթոռի ունեցած իրաւանց խնդիրը շօշափելով, չի՞ արտայայտում որեւէ կերպով Փաւստոսի նկարագրած զարմանքն ու ցասումը\*\*:

Արդեօք նոյն իսկ այդ Փաւստոսի ձեռնադրութեան հանգամանքները ցոյց չե՞ն տալիս, որ Հայոց թագաւորի իշխանութեան ներքոյ եղող այն եպիսկոպոսները միայն ձեռնադրուում էին կեսարիայում, որոնց թեմերը Մեծ Հայքի սահմաններից դուրս էին՝ արեւմուտքում, ըստ եկեղեցակահանին կապադովկոյ վիճակի մէջ: Արդեօք այսպիսի հանգամանքների և եկեղեցական վէճերի արձագանքը չէ՞ սխալ հասկացմամբ կամ որոշ դիտմամբ այն ձեակերպութիւնն ընդու-

\* Նոյն. էջ 129 շ.

\*\* Փաւստոս, դպ. Ե. գլ. ԻԹ. էջ 190:

ներ, որ գտնուում ենք Փաւստոսի մէջ, կամ գուցէ պատահական կերպով մեր հայրապետներից մէկն ու մէկի (օր. ս. Ներսէսի) Աեսարիայում ձեռնադրութիւն ընդունելու եղակի մի դէպք ընդհանրացրուել և վերադրուել նորա բոլոր նախորդներին: Չմոռանանք որ Հայոց եկեղեցւոյ այս նախնական շրջանի վերաբերմամբ Փաւստոսի սրտամաճների մէջ միակ մութ կէտը չէ այս. Գեղցէր այսպիսի կէտերից մի քանիսը մատնացոյց է արել, բայց կարելի էր նոցա թիւը բազմապատկել: Մենք միայն մէկը յիշենք. ինչպէ՞ս է որ ս. Լուսաւորիչ վախճանում է շուրջ 330 թ.-ին, նորա որդին ս. Վրթանէս վախճանում և իւր որդին Տանուկի Յուսիկ իւր տեղն է նստում շ. 340 թ.-ին, իսկ նոյն Տանուկի Յուսիկի թոռը՝ ս. Լուսաւորչի թոռան թոռը, ս. Ներսէս կաթողիկոս է լինում, մեծամեծ գործեր կատարում, մեծ բարեփոխութիւններ մտցնում իւր եկեղեցւոյ մէջ, և վախճանում՝ ըստ երևոյթին արդէն ծեր հասակում, 673 թ.-ին: Պարզ չէ միթէ, որ Փաւստոսի տեղեկութիւնները՝ որչափ և աւելի սրտամական ու անհամեմատ վստահելի քան Խորենացու և ուրիշ աղբիւրների տուածները, զուտ ճշմարտութիւն համարուել այնուամենայնիւ չեն կարող—մանաւանդ այնպիսի կէտերում, ուր կողմնակի դիտումն ակներև է: Իսկ թէ Նա առանձին նախանձախնդրութիւն է ցոյց տալիս Աեսարիոյ աթոռի իրաւանց նկատմամբ և ուրեմն կցանկանար որ պատմութիւնն ըստ կարելւոյն շատ փաստեր ընձեռէր այդ իրաւունքը հաստատելու համար՝ ապացուցանելու կարիք չկայ:

Ինչից էր յառաջ դալիս արդեօք այդպիսի նախանձախնդրութիւն: Նորանից միթէ, ինչպէս Գեղցէր է ընդունում, որ Փաւստոս պատկանում էր Պապի օրով կազմուած եկեղեցական կուսակցութեան և կցանկանար Աեսարիայի հետ միութիւն պահելով ս. Ներսէսի քաղաքականութիւնը պաշտպանել, Պապի կուսակից և առանց Աեսարիոյ արքեպիսկոպոսի հաճութեան Աղբիւնոսի սերունդից կարգուած հայրապետների իշխանութիւնը նուաստացնել: Բայց չէ՞ որ Փաւստոսի պատմութիւնը գրուած է ըստ Գել-

ցերի Ռ. դարի վերջում\*, երբ ոչ Պապ կարս ոչ էլ նորա հակառակ կուսակցութիւն կարող էր լինել. երբ ընդհակառակն Հայոց հայրապետն էր ս. Սահակ, որ ըստ Գեղցերի Աեսարիա չի գնացել ձեռնադրութիւն ընդունելու: Արեւ է միաբունէր նորա համար ստուերների հետ կռիւ մղել և Յուսիկէ ու Ջաւէնի կախկոպոս ձեռնադրելու իրաւունքը ժխտել այնպիսի մի ժամանակ, երբ ոչ ոքից ծածուկ չէր, որ նորա այդ իրաւունքը գործադրել են: Ամ ինչո՞ւ նա՝ ինքն անձամբ ենթակայ լինելով «Հայոց արեան և մարմնոյն մէջ խոր թափանցած եկեղեցւոյ բացարձակ անկախութեան գաղափարին», բոլորովին աննպատակ տեղը Հայոց եկեղեցին Աեսարիոյ հպատակ պէտք է ցոյց տար, հոգևոր միութեամբ կապուած նորա հետ, մինչ այդ կասն անկասկած այլևս գոյութիւն չունէր:—Այն ևս ընդունենք, թէ Փաւստոս ինքն այդ կռիւների մէջ ասլրած լինելով՝ քամուն էր տալիս դեռ հին յարդը. իսկ թարգմանիչը, որ այն շրջանի մէջ էր ասլրում, ուր ըստ Գեղցերի գրոյցներ էին հնարում Հայոց եկեղեցւոյ անկախութիւնը Աեսարիայից հաստատելու համար՝ ինչո՞ւ էր այդ դրութեան հակառակ փաստեր տալիս իւր թարգմանութեամբ\*\*: Եւ արդեօք այս դիտաւորեալ գրոյցների ժամանակը մի անգամ Ե. դարի միջոցները համարելուց յետոյ չի՞ կարելի ենթադրել, թէ հենց այդ ժամանակ կային մարդիկ, որոնք շահ ունէին Ագրխանոսի տան հայրապետական իրաւունքը հերքելու:

Փաւստոսի իւր պատմութիւնից երևում է, որ Ռ. դարում ոչ ոքի համար կասկածելի չէր, թէ Աուսաւորչի անից մի յար-

\* Ըստ մեզ իւր այժմեան կազմութեամբ Փաւստոսն այդչափ վաղ դրի առնուած լինել չի կարող ոչ մի դէպքում:

\*\* Ինչպէս յայտնի է, նորայր Բիւզանդացին իւր «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» գրքով (Տիփսիս, 1900) աշխատում է ապացուցանել, որ Ագաթանգեղոս և Փաւստոս միևնոյն թարգմանչի՝ Կորիւնի, գործ են: Եթէ նորա փաստերը թարգմանչի նոյնութեան համար բաւական զօրեղ չհամարուեն, ցոյց են տալիս դսնէ որ այդ թարգմանութիւնները մի և նոյն շրջանից են ելել:

մար ներկայացուցիչ չեղած զէպքում հայրապետական աթոռ քարձրանալու իրաւունքը Աղբիանոսի սերունդին էր: Բոլոր նշանները ցոյց են տալիս, որ մինչև Ն. դարու միջոցները ժառանգութեան օրէնքը ինչպէս նախարարական տներում, այնպէս և եպիսկոպոսական աթոռների համար հաստատուն պահուել է, և խախտուել միայն Արշակունեաց թագաւորութեան վերջնական անկումից, մանաւանդ թէ Ասորդանանց պատերազմներից յետոյ, երբ ուրիշ շատ կարգերի հետ այդ ևս տակնուվրայ եղաւ: Դեռ ս. Սահակի կենդանութեամբ, ինչպէս յայտնի է, հայրապետական իշխանութիւնը յափշտակեցին նորանից և տուին Պարսից արքունիքի հաւատարիմներին, մինչև իսկ օտարական մարդոց: Բայց նոքա հարկաւ իբրև օրինական հայրապետներ չէին ճանաչուում և գուցէ վայելում էին նման քաղաքական իրաւունքների, ինչպիսիք վերագրուում են Ներսէս Մեծի յաջորդներին: Երբ ս. Սահակ վախճանուեցաւ անզաւակ, հարց պէտք է յառաջ գար ուրեմն, թէ ո՞վ պէտք է լինի նորա օրինաւոր յաջորդը: Ամենայն հաւանականութեամբ հեշտ կերպով չվճռուեցաւ այդ հարցը՝ շփոթութիւններ ծագեցին, որոնցով և բացատրուում է այն տարօրինակ երևոյթը, թէ ինչու բաւական երկար ժամանակ այլ ևս իսկական կաթուղիկոսի անուն չի լսուում, և ս. Մեսրոպ ու ս. Յովսէփ, որոնք հայրապետական իշխանութիւն են վարել այդ ժամանակ, տեղապահներ են համարուում: Ուշ ժամանակի յիշատակարաններ իբրև տեղապահ յիշում են նաև ս. Աւոնդին, և ոմանք նոցա հետ մէկտեղ վեց տարի կաթուղիկոս եղած ցոյց են տալիս Սուրմակին (որ երևի Արտաշատի ժողովականների ցանկում յիշուած Բզնունեաց Սուրմակ եպիսկոպոսն է): Այնուհետև մեր պատմագիրներն առհասարակ ս. Յովսէփից անմիջապէս յետոյ դնում են Գիւտ կաթուղիկոսին, որ և ուրեմն կլինէր ս. Սահակի առաջին օրինական յաջորդը: Բայց Ազգար Փարպեցին տալիս է մեզ մի թանկագին տեղեկութիւն, որ փոքրի շատէ լոյս է սփռում իրերի բուն ընթացքի վերայ: Յիշելով, որ երբ Հայոց նախարարները գերութիւնից վերադարձան (464 թ.), նոցա օրհնող կաթուղիկոսն էր Գիւտ՝

նա ասում է. «Քանզի յեա կատարման սուրբ կաթուղիկոսին Յովսեփայ յաջորդեաց զկաթուղիկոսութիւն աշխարհիս Հայոց տէր Մելիտէ, որ էր յազգէն Մանազկերտեցեացն. և զհետ նորա տէր Մովսէս, որ էր և նա ի նոյն ազգէ: Եւ ապա ըստ Աստուծոյ տեսչութեանն յաջորդեաց զկաթուղիկոսութիւն աշխարհիս Հայոց տէր Քիւայ, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեղայ, այր լի զիսութեամբ հայրիւս և առաւելեալ յունիւն»\*: Նոյն Փարպեցին Արտաշատի ժողովականներէ ցանկում (որի մէջ Ե. տեղը բռնում է՝ Տէր Մելիտէ Մանազկերտոյ եպիսկոպոս) առաջին տեղը ս. Յովսէփին զնելով, աւելացնում է՝ «որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ կկաթուղիկոսութեան Հայոց զաթոռն ունէր ի ժամանակին». իսկ ուրիշները (օր. Թովմայ Արծրունին) տեղապահ են համարում նաև Մովսէս ու Մելիտէ Մանազկերտացիներին:

Ահա այս վերջինները եթէ իրար հակառակ կաթուղիկոս են եղել՝ անշուշտ իրենց անձնական արժանիքներէ շնորհիւ չէր, այլ որ նորա Ադրիանոսի ցեղից էին: Ս. Սահակի երկարատե հայրապետութեան ժամանակ, զբերի զիւսի հետ կապուած բազմակողմանի եկեղեցական բարեկարգութեանց շնորհիւ՝ հայ հոգևորականութիւնն այնչափ ընտելացել էր ընդհանուր եկեղեցւոյ մէջ տիրող կարգերին և շատ բան իւրացրել նորանից, որ գուցէ շատերին խորթ էր թուում այլևս իրբև տոհմական առանձնաշնորհութիւն ձանաչել այնպիսի մի նուիրական և առաւել ու առաւել մեծ նշանակութիւն ստացող կոչում, որպիսին հայրապետութիւնն էր: Քանի դեռ ս. Մեսրոպ կար, քանի ս. Սահակի և ս. Մեսրոպի աշակերտաց ամբողջ խումբն ասպարիզի վերայ էր՝ օտարոտի կլինէր, որ մի կողմնակի, գուցէ տղէտ և ապիկար, անձնաւորութիւն ժառանգական իրաւունքներով կաթուղիկոսականութիւն բարձրանար և եկեղեցւոյ բարձրագոյն վարչութեան ղեկն իւր ձեռքն առնէր. իսկ տիրող օրէնքը թոյլ չէր տալիս, որ ս. Մեսրոպ և ս. Յովսէփ կաթուղիկոս ձեռնադրուէին. — նորա մնացին տեղապահ իսկա-

\* Պատմութիւն, Վենետիկ էջ 333:

պէս կաթուղիկոսական իշխանութիւն վարելով: Բայց Վարդանանց պատերազմից յետոյ, երբ ս. Սահակի և ս. Մեսրոպի դպրոցի սովնից աչքի ընկնող ներկայացուցիչները գերի տարուեցան ու նահատակուեցան՝ հին սերունդը կրկին ասպարէզ եկաւ և երևի մի վերջին փորձ արաւ Աղբիանոսի տան ժառանգական իրաւունքները վերականգնելու, մինչև որ երկրի մէջ փոքր ի շատէ խաղաղութիւն տիրեց, արժանաւոր հոգևորականները անկիւններից ու իրենց թաքստեան տեղերից ելան, — նոր դադափարները յաղթանակեցին և (բառի բուն նշանակութեամբ) ընդհատեցաւ կաթուղիկոս այնպիսի մէկը որին այդ բարձր պատուին արժանացնում էր ո՛չ թէ իւր ծագումը, այլ լինելն «այդ լի դիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն»: — Ահա այս բոլորն ի նկատի առնելուց յետոյ կարելի է, կարծում ենք, հարցնել, Փաւստոսի աւանդած մի շարք տեղեկութիւններ արդեօք այսպիսի հանգամանքների աղդեցութեան ներքոյ չե՞ն իրենց արդի ձևակերպութիւնն ստացել. Մելիտէի և Մովսէսի կաթուղիկոսութեան օրինաւորութիւնը չճանաչողները չե՞ն արդեօք որոնք նոցա հայրերի՝ Յուսիկ Բ. ի, Զաւէնի, (Շահակի), Ասպուրակէսի ձեռնադրութեան օրինաւորութիւնը ժխտում էին, և նոյն իսկ ձեռնադրական իրաւանց Աեսարիոյ աթոռի հետ կապելը արտայայտութիւն չէր արդեօք այն հայեացքի, թէ ընդհանուր եկեղեցւոյ մէջ այս նկատմամբ ընդունուած կարգերն են ուղիղը, և ո՛չ Հայոց մէջ եղածը\*:

Այսպիսի ենթադրութիւններ շատ կարելի է անել, բայց մենք դառնանք բուն խնդրին, և նկատենք, որ մինչև իսկ այն դէպքում, երբ ս. Նուսաւորիչ և իւր յաջորդները բոլորեքեան Աեսարիայում ձեռնադրուած լինէին՝ Հայոց հայրապետութիւնը Աեսարիոյ աթոռին չէր ենթարկուել և Հայոց եկեղեցին իւր անկախութիւնը չէր կորցնի: Նախ որ Փաւստոս և իւր երեւակայեալ կուսակիցները, ինչպէս ակնարկեցինք, Աեսարիոյ արքեպիսկոպոսի ձեռնադրութեան իրաւունքը պաշտպա-

\* Պէտք է ջնոռանալ նաև, որ մենք ո՛չ մի տեղեկութիւն չունինք, թէ ս. Սահակ ո՛ւր և ինչպէ՞ս ձեռնադրուեցաւ:

ներով՝ նորան որևէ գերիշխանութիւն Հայոց եկեղեցւոյ վերաբերմամբ չեն ընծայում: Գեղեղէր ինքը նկատում է, որ Փաւստոս անխտիր «Հայրապետ» կոչումն է տալ իս Հայոց կաթողիկոսներին և ուրեմն մի մետրապոլիտի կամ արքեպիսկոպոսի իշխանութեան ենթակայ նոցա համարել չէր կարող: Բայց զուր տեղը կարծում է Գեղեղէր, թէ այդ կոչումը Գ. դարի վերջերում էր «պատշաճեցուցած» և թէ «եկեղեցւոյ բացարձակ անկախութեան գաղափարը» որ և է 10—15 տարուայ մէջ «խոր թափանցեց Հայոց արեան և մարմնոյն մէջ»: Մի թէ «կաթողիկոս» կոչումը, որ նա նախնականն է համարում՝ պակաս ընդարձակ և բացարձակ իշխանութիւն է ընծայում այդ կոչումն ունեցողներին, և Ազատանդեղոսի ու Փաւստոսի կամ ուրիշ հին յիշատակարանի մէջ կայ որևէ ակնարկ կամ նշան, որ Հայոց հայրապետն իրենից բարձր եկեղեցական իշխանութիւն ճանաչած լինի երբ և իցէ:—Նրկրորդ՝ այն ժամանակ, երբ ս. Լուսաւորիչ հայրապետական աթոռ բարձրացաւ, ընհանուր եկեղեցւոյ մէջ ո՛չ պատրիարքութիւն, ո՛չ արքեպիսկոպոսութիւն, և ո՛չ նոյն իսկ որոշ կերպով ձևակերպուած մետրապոլիտական իշխանութիւն է եղել: Գ. դարում դեռ ո՛չ մի եպիսկոպոս միւսին ստորադրեալ չէր համարուում, և մերժուելով մերժուում էին նաև այնպիսի հեղինակաւոր աթոռների իշխանական ձգտումները, ինչպէս օր. Հռոմինը: Եպիսկոպոսական բարձր իշխանութիւններ յառաջ եկան այստեղ Գիողիտիանոս կայսեր հաստատած վարչական կազմակերպութեան հետևողութեամբ, որի համեմատ ամբողջ պետութիւնը բաժանուած էր 100 նահանգների՝ մի քանի նահանգներ միասին կազմում էին մի Գլոխէղ մի քանի զիոցէզ միասին մի պրեֆեկտուր: Նահանգական քաղաքներում (յուն. բառով Թարապոլիս) նստող եպիսկոպոսները, որոնցից շատերն արդէն մի որոշ բարոյական հեղինակութիւն վայելում էին փոքր տեղերի եպիսկոպոսների նկատմամբ՝ շուտով գերիշխանութիւն ձեռք բերին ամբողջ նահանգի վերայ և դարձան մետրապոլիտաներ, զիոցէզների կենտրոնում նստող մետրապոլիտաները նոյն կարգով միւսներին աւելի բարձր դիրք ձեռք բերին և կոչուեցան արքեպիսկոպոսներ, պետութեան զլխա-

ւոր քաղաքներին՝ Հռովմի, Աղէքսանդրիոյ, Անտիոքի (որոնց վերայ աւելացաւ յետոյ նաև Կ. Պոլիսը) արքեպիսկոպոսական աթոռները պատրիարքութեան կոչում իւրացրին. բայց նոցա իշխանութեանց սահմանները յաջորդ դարում միայն հաստատապէս որոշուեցան (մասամբ համապատասխան սլեյքեկաուրներու բաժանման), և մէկն ու միւսը սկսեցին ձգտում ցոյց տալ ամբողջ եկեղեցու վերայ նուիրապետական իշխանութիւն գործ դնելու:

Արդ, ինչպէս ինքը Պելլէր մի շարք փաստերով ասացուցել է՝ Հայոց եկեղեցու նախնական վարչական կազմակերպութիւնը բոլորովին տարբեր հիմունքներով էր հաստատուել և կայսերութեան մէջ տիրող կարգերի հետ ոչ մի ներքին առնչութիւն ունենալ չէր կարող: Երկու տեղում ևս եկեղեցական վարչութիւնը ձևակերպուեց յար և նման քաղաքականին՝ այն տարբերութեամբ միայն, որ կայսերութեան մէջ քրիստոնէութեան պետական կրօն դարձած ժամանակ եկեղեցին արդէն իւր որոշ կարգերն ու իւր հաստատուն կազմակերպութիւնն ունէր, և երկար միջոց հարկաւոր էր, մինչև յարմարուէր պետութեան կարգերին. մինչդեռ Հայաստանում ընդհակառակն սկիզբն իբրև դրսից եկած մի նոր կրօն նկատուեց նաև յարմարեցրուեց տեղական կարգերին, և միայն քաղաքական անկասութիւնը կորցնելուց և պետական կազմի քայքայուելուց յետոյ ընդունուեցաւ այն դրութիւնը, որ ընդհանուր եկեղեցույ մէջ հաստատուել էր Հայաստանը Տրդատի օրով, որչափ և Հռովմէական գերիշխանութեան ներքոյ՝ իւր ներքին գործոց մէջ անկախ և ղեռ բաւական զօրեղ մի պետութիւն էր. նա բաժանուած էր մի շարք մեծ ու փոքր նախարարութիւններէ, որոնք նոյնպէս կառարեալ տէր էին իրենց սեփական երկրի մէջ և միայն արտաքին քաղաքականութեան վերաբերեալ գործերում հպատակուում էին թագաւորին: Թէպէտ Ազատանգեղոսի նկարագրութիւնից պարզ չէ, բայց պատմութեան ընթացքը ցոյց է տալիս, որ եպիսկոպոսական թեմերի բաժանումը համապատասխան էր նախարարական կաշուածներէ բաժանման, և որչափ բարձր դիրք ունէր մի

նախարար՝ գրեթէ նոյնպիսի դիրք ունենում էր նաև նորա  
 երկրի եպիսկոպոսը։ Արտաշատի ժողովում եպիսկոպոսաց  
 ցանկի մէջ առաջին տեղը յիշուած են Սիւնեաց և Արծրու-  
 նեաց եպիսկոպոսները, ինչպէս և Սիւնեաց ու Արծրունեաց  
 տէրերը նախարարների մէջ առաջին են. Բարգէն կաթողի-  
 կոսի և Ներսէս Բ. ի գումարած ժողովներում արդէն Մա-  
 միկոնեաց եպիսկոպոսն է առաջինը, ինչպէս որ Մամիկոնեան  
 տունը իշխող դիրք ունէր ամբողջ Զ. դարում, և այս կար-  
 դը շարունակուում է նաև յաջորդ դարերում, մինչև նա-  
 խարարական իշխանութեանց վերջնական կազմալուծումը։  
 Նթէ եպիսկոպոսաց ցանկերի մէջ նախարարութեանց անուն-  
 ների հետ խառն դրուում են դաւառների անուններ և այն  
 որ աւելի բարձր տեղում կսպասէինք՝ ցածր տեղում է, դո-  
 րա պատճառը երկու կարող է լինել. մէկ որ, ինչպէս Ֆելցէր  
 Ազաթանգեղոսի ցուցումները վերայ հիմնուելով շատ հաւա-  
 նական է դարձրել՝ Հայոց եպիսկոպոսական աթոռներից շա-  
 տերը ժառանգութիւն էին նախնի քրմական իշխանութեանց  
 և իրենց ժառանգական իրաւունքները պահելով աւելի նա-  
 խապատիւ տեղ կգրաւէին, քան իրենց թեմի քաղաքական  
 դիրքը թոյլ էր տալիս. երկրորդ, որ Հայոց նախարարների մէջ  
 երկու տեսակ աստիճանաւորութիւն կար՝ ոմանք բարձր դիրք  
 էին գրաւում իրենց երկրների ընդարձակութեան, ուրիշնե-  
 րը արքունիքում ունեցած պաշտօնների շնորհիւ։ Այս եր-  
 կրորդ կարգին պատկանում էին որ, մարդպետները, սպարա-  
 պետ Մամիկոնեանք, հազարապետները, մաղխաղ Սորխոսունիք,  
 Երբեմն, մանաւանդ յետագայ դարերում, նշանակութիւն  
 կունենար անշուշտ այս կամ այն եպիսկոպոսի անձնական  
 արժանիքն ևս։ Յամենայն դէպս այսքանը որոշ է, որ գլխա-  
 ւոր նախարարական աներն իրենց եպիսկոպոսական աթոռ-  
 ներն ունէին, իսկ Արարատի եպիսկոպոսը սկզբից և եթ  
 ստացաւ այնպիսի իշխանութիւն բոլոր եպիսկոպոսների վե-  
 րայ, ինչպիսին թագաւորը նախարարների վերայ ունէր՝ այ-  
 սինքն եղաւ եպիսկոպոսապետ ու քահանայապետ, բառի  
 ընդարձակ նշանակութեամբ։

Կապագովկիոյ Կեօարիայի հետ Բ. դարում հայերի ու-

նեցած սերտ յարաբերութեան գլխաւոր պատճառն այն պէտք է համարել, որ այդ քաղաքում էր նստում Հայաստանը Պարսից դէմ պաշտպանող և կայսեր գերիշխանութեան ներքոյ պահող զօրքերի հրամանատարը: Այդպիսով Ահաբիան կայսերական կառավարութեան և Հայաստանի մէջ քաղաքական յարաբերութեանց համար գլխաւոր կենտրոնն էր և որովհետև Հայոց հայրապետներն ևս մասնակցում էին քաղաքական գործերին, երբեմն\* նոյն իսկ միջնորդի դեր կատարում քրիստոնեայ իշխողների առաջ՝ բաւական առիթներ կուեննային ուրեմն Ահաբիայում գտնուելու և ի պահանջել հարկին նաև եկեղեցական գործերի խառնուելու: Յիրաւի այդանց գումարուած եկեղեցական ժողովներին մասնակցողների թուում գտնուում են, ինչպէս Քելցէր յիշում է, Շահակ Ա. ի և Ներսէս Մեծի անունները: Ի՞նչ անց էին գրաւում նոքա այդ ժողովների մէջ և ինչպէս էր պայմանաւորուած նոցա մասնակցութիւնը՝ մենք չգիտենք, կարող ենք ենթադրել, որ յոյն եպիսկոպոսները նոցա վերայ բարձրից էին նայում, յոյն մարդու սովորական արհամարհանքով, իբրև «բարբարոս» երկրից եկածների վերայ, և գուցէ ոչ միայն Ահաբիոյ արքեպիսկոպոսից, այլ և ամենափոքրերից աւելի փոքր էին համարում նոցա: Բայց վերևի բացատրութիւններից պարզ պէտք է լինի, որ մինչև Վ. դարի կեսը ախրող կարգերը ոչ ոքի իրաւունք չէին տալիս գերիշխանական ձգտումներ ունենալու որոշ սահմաններից դուրս գտնուած եպիսկոպոսների վերայ: Ուր մնաց որ Հայաստանը պետութեան բուն սահմաններից դուրս էր գտնուում և նորա վերայ իրական իշխանութիւն բանեցնել դժուար կլինէր նաև յետագայ շրջանում՝ այնքան զօրեղ էր պետական կարգերի ազդեցութիւնը և այնքան սերտ պետական և եկեղեցական իշխանութեանց կապը Բիւզանդական եկեղեցւոյ մէջ: Թէպէտ Բարսեղ Մեծի նման մի նշանաւոր եկեղեցականի օրով, երբ ընդհա-

\* Ո՛չ անշուշտ այնպէս յաճախ և այնպիսի ձևով, ինչպէս Խորենացին է ներկայացնում. արժանահաւատ են միայն Փառաստուի յիշատակութիւնները:

նուր եկեղեցւոյ մէջ իշխանասիրական ձգտումների զարգացման ամենատար ժամանակն էր՝ կարող է Կեսարիայում մի շարժում եղած լինել դուրսը որոշ հեղինակութիւն ձեռք բերելու նպատակով, որի առաջն և շտապել է դուրսէ առնել Պապ Թագաւորը: Յամենայն դէպս այն անկախ և ինքնուրոյն իշխանութիւնը, որ հաստատուել էր ս. Լուսաւորչի օրով, տասնեակ տարիներ յետոյ յառաջ եկած ժամանակաւոր պայմաններ վերացնել չէին կարող, և ինչ կողմէ մտածած լինեն Կեսարիոյ մետրապոլիտները՝ Հայերն իրենք անկախ են համարել անշուշտ իրենց հայրապետին ամէն արտաքին իշխանութիւնից՝ ո՛չ միայն ս. Լուսաւորչի ժամանակ կամ Ե. դարում, այլ հէնց Արշակ և Պապ Թագաւորների օրով, որոնց մասին ժամանակակից Ամիանոս պատմիչի նկարագրութիւններից յայտնի է, թէ ինչպէս դժուարութեամբ, և միայն անուանական կերպով, կին հպատակում նորա մեծազօր կայսրների իշխանութեանը. մի թէ թոյլ կտային իրենց հաւասարապատիւ հայրապետին մի մետրապոլիտի հպատակելու:— Այսպէս ուրեմն «Վաղարշապատի զրոյցը» ինչ ժամանակ և յառաջ եկած լինի՝ ո՛չ թէ կեղծիք է, այլ արտայայտութիւն մի իրական զրութեան, որի մեծ նշանակութիւնը դուրսէ ուշ է հասկացուել, բայց հիմքը շատ վաղ է դրուել\*:

Առաջադրեալ խնդրի միւս կէտերի վերայ երկար կանգ չենք առնի, մանաւանդ որ նախընթաց կարեւորագոյնների

\* Ընթերցողների դիւրութեան համար մենք այստեղ Գեղեցիկի շարագրութեան թարգմանութիւնը դորձ դրինք, թէպէտ իւր ճշտութեամբն ու հարադատութեամբ նա շատ չի փայլում:— Նշանակելի է մանաւանդ թարգմանիչ Մխիթարեան հօր սրտի գոհութիւնն ու ցնծութիւնը՝ ապացուցուած տեսնել, «թէ ս. Լուսաւորիչ Վաղարշապատի մէջ չէ հիմնած նախկին ազգային մայր եկեղեցին, այլ Տարօնոյ Աշտիշատ քաղաքի մէջ»:— Խորենացու և այլ դուռ պատմական խնդիրների նկատմամբ ամէն քննադատութիւն մերժող Մխիթարեաններն ինչպէս զրկաբաց են ընդունում այստեղ քննադատութիւնը, ի՛նչ ճշմարտասիրութիւն ցոյց տալիս, ի՛նչ նախանձախնդրութիւն ... Ո՛ւմ համար արդեօք:

մասին չափից աւելի խօսուեցաւ: Պրոֆ. Լ. օօֆս Ա. Տէր Մի-  
քելեանի գրուածքից\* առնում է նորան յատուկ տարօրի-  
նակ տեսութիւններէից մէկը և յայտնում, որ Կ. Պոլսի և  
Եփեսոսի ժողովներէ վճիռները միայն իբրև «ուղղափառ» են  
ընդունուել Հայերի կողմից, «առանց նկատուելու իբրև «էկեղե-  
շական ժողովներէ վճիռներ»:—Մեզ որոշ կերպով յայտնի չէ յի-  
րաւի, թէ մեր եկեղեցին երբ է սկսել ճանաչել նոցա հեղի-  
նակութիւնը. բայց որ Զ. և Ե. դարերում նոցա արդէն Նի-  
կիոյ ս. ժողովին զուգադատու էին ճանաչուած, նորա հետ  
մէկ տեղ մի անբակտելի ամբողջութիւն էին կազմում՝ բոլոր  
քրիստոնէից համար անպայման հեղինակաւոր հաւատոյ խըն-  
դիրներում:—Ոչ մի կասկած չեն թողնում այդ մասին նոյն  
դարերից մեր ձեռքը հասած դաւանաբանական թղթերը: Հե-  
տաքրքրական է այն երևոյթը, որ այդ թղթերից հնազոյննե-  
րի՝ Բարգէն կաթողիկոսի թղթերի, մէջ յիշուում է միայն  
Կ. Պոլսի ժողովը, կողմնակի կերպով, իբրև հաստատող  
Նիկիոյ ժողովի որոշմանց, և միայն Նիկիոյ ժողովը իւր  
դաւանութեամբ բացարձակ հեղինակութիւն է՝ թէ Հա-  
յերի և թէ նոցա հետ բանակցող արևելքի քրիստոնեաների  
համար: Իսկ Ներսէս Բ. Աշտարակեցու, Յովհաննէս Գարե-  
ղենցու և յետոյ Աբաց բաժանման առթիւ փոխանակուած  
թղթերում երեք ժողովները միասին են յիշուում և միա-  
կերպ: Կարելի է ենթադրել օրինակ, որ Բարգէնից առաջ  
մեր եկեղեցին նոցա նկատմամբ որոշ դիրք բռնելու, մի պաշ-  
տօնական որոշում ապու առիթ չէր ունեցել. բայց քանի  
որ ինքը Բարգէն ընդունել էր Զենոն կայսեր հենտակոնը՝  
պէտք է նորա հետ մէկ տեղ ընդունած լինի նաև երեք ժո-  
ղովներէ արեգերական հեղինակութիւնը, որի վերայ առանձ-  
նադէս շեշտուում է այդ թղթի մէջ: Գուցէ այդ ժամանա-  
կից և Հայերն սկսան երեք արեգերական ժողովներ ճանաչել,  
այդ երեքն իբրև ուղղափառ դաւանութեան սահման ըն-  
դունելով հակառակ Քաղկեդոնի:

\* Տես. Հայ. եկեղեցին և Բիւզանդական ժողովոց պարա-  
գայք, Մոսկուա, 1892. էջ 17—45:

Բարդէն կաթուղիկոսի ժողովական թուղթն առաջին անգամ հրատարակելիս\* մենք պարզ ցոյց ենք տուել և ուրիշ առիթներում ևս կրկնել, որ նորա նշանաւոր ժողովը գումարուել է ո՛չ թէ 491 թ.ին Վաղարշապատում, այլ 506 թ.ին Դուինում, և գլխաւոր խնդիրն այստեղ եղել է ո՛չ թէ քաղկեդոնականութիւնն, այլ նեստորականութիւնը: Անցեալ տարի լոյս տեսաւ «Գիրք թղթոց»ն ամբողջութեամբ\*\*, և ինչպէս մենք նախօրօք մի քանի յօդուածներով պարզել ենք՝ այդ գրքի բովանդակած թանկագին պատմական յիշատակարանները բոլորովին որոշ կերպով պատկերացնում են զաւանսարանական վէճերի զարգացման ընթացքը մեզանում և ցոյց տալիս, որ սովորական ընդունածից շատ կէտերում տարբեր է եղել այն, որ Հայոց եկեղեցու մաքառումը Զ. դարում գրեթէ ամբողջապէս նեստորականութեան դէմ է ուղղուած եղել. իսկ Դուինի Ա. ժողովում 506 թ.ին, Բարդէն կաթուղիկոսի օրով, Քաղկեդոնի նկատմամբ նա այն զիրքն է բռնել, ինչ որ նոյն ժամանակի, Զենոն և Անաստաս կայսրների կառավարած՝ պետական եկեղեցին, այսինքն լուրեայն միայն դատապարտել է, ապա բացարձակապէս բանադրել Դուինի Բ. ժողովում, ներսէս Բ.ի օրով, 654 թ.ին. իսկ բոլոր ուշադրութիւնը նորա դէմ դարձնել սկսել է միայն Մօրիկ կայսեր օրով և Վրաց բաժանման ժամանակ: Պրոֆ. Վ. օօֆս այս բոլորի մասին տեղեկութիւն չի ունեցել և հեռուելով սովորականին՝ ասում է, թէ Հայերն «արդէն Ն. դարում կտրական կերպով» մերժել են Քաղկեդոնի ժողովը: Յանկալի է որ հայ հեղինակներն ու պատմութեան ուսուցիչները նեղութիւն կրեն ծանօթանալու լոյս տեսած գրքերի և հետազոտութիւնների հետ և, հաստատուած նախապաշարումներն իրենց դասերի ու գրուածների մէջ կրկնելով՝ օտարներին ևս մոլորութեան մէջ չձգեն:

Դժբաղդարար միայն այս կէտում չէ, որ օտարները հայ հեղինակների հեռուելով սխալ գաղափար են ստացել և ստա-

\* Արարատ. 1898, հոկտեմբեր, էջ 171. համ. էջ 431 շ.:

\*\* Թեֆլիս, 1901:

նում մեր պատմական անցեալի մասին: Ամենատարածուած նախապաշարմունքներից մէկն էլ այն է, թէ Հայոց մէջ Ե. դարու ոսկէ շրջանի զրականութեան ծաղկումից յետոյ եկել են մի շարք անպտուղ խաւար դարեր՝ մինչև որ Ժ. դարում մի կարծառե արծաթէ շրջան է տեղի ունեցել Կիլիկիոյ կողմերը, ապա կրկին խաւարը տիրել է մինչև Մխիթար Սեբաստացու և իւր միաբանութեան հանդէս գալը, որ լուսաւորութիւն է բերել և սկիզբ դրել մեր ժամանակուայ ամբողջ հայկական լուսաւորութեան: Իրողութիւնն այն է սակայն, որ զրականութեան զարգացումը մեր մէջ երբէք դադար չի առել. Զ. դարը բոլորովին անպտուղ և անապատ չի եղել, ինչպէս կարծուում է. Է. Ը. դարերում գրուել ու թարգմանուել են այն գրուածներն մի սրոշ տոկոսը բրոնք Ե. դարին են վերագրուում, և ուրիշ շատ արժէքաւոր գործեր. Թ. Ժ. Ժ.Ս. դարերում ծաղկել են վանքերն իրենց յատուկ զրականութեամբ և Գրիգոր Նարեկացու պէս ներկայացուցիչներով. Ժ.Բ. դարում Կիլիկիայից զատ ընդարձակ գործունէութիւն է եղել բուն Հայաստանի գանոգան կենտրոններում (Անիում, Գանձակում), և զրականութիւնը շարունակել է ծաղկել յաջորդ դարերում մանաւանդ Հաղբատ և Սանահին վանքերի դպրոցներից ելած հեղինակների ձեռքով. ապա եկել է Տաթևի դպրոցը՝ իւրացրել ի միջի այլոց Ալբերտ Մեծի, Թովմաս Սկուինացու մշակած սքոլաստիկան, և այդ դպրոցի վերջին շուռաւիղները յառաջ են բերել վերածնութեան այն մեծ շրջանն իւր բաղմակողմանի արգիւնքներով, որ նկարագրուած է «Արարատ»-ի վերջին համարներում: «Միւս արեւելեան ազգային եկեղեցիների այժմեան դրութեան» նման «ողորմելի» դրութիւն Հայերն ուրեմն ո՛չ մի ժամանակ չեն ունեցել, ինչպէս նկատում է պրոֆ. Լ. օօֆս՝ սխալ տեղեկութիւնների վերայ հիմնուելով: Դաւանական խտրութիւնը բարերազգութար արգելք չէ եղել մեր հայրերին շարունակ շփումն ունենալու օտարների՝ սկզբում յոյների, ապա քրահնէրէ և նոր ազգութիւնների հետ, և նոցա մէջ զարգացող զրականութիւնից օգտուելու ու նոցա դատողութեան եղանակին յարմարուելու, որից զուրկ են մնացել միւս արեւելեան քրիս-

տոնեաները: Իսկ «ԺԵ» դարից ի վեր եղած վերակենդանութեան շարժումը, ինչպէս վերոյիշեալ նկարագրութիւնից պարզ երևում է, ո՛չ միայն Մխիթարեանց ազդեցութեամբ չէ յառաջացել, այլ ինքն է Մխիթար Սեբաստացի ծնել: Մխիթարեանք գրական ազդեցութիւն սկսել են գործել միայն ԺԵ դարու վերջերից, և Չամչեանի եռաճատոր պատմութեան ու նման աշխատութիւնների ետև թագնուած են մնացել այնուհետև մայրենի երկրում՝ շատ աւելի դժուար պայմանների մէջ գործողների աշխատութիւնները, որոնք բնիկ ժողովրդին պակաս ծառայութիւն չեն մատուցել: Ապա շնորհիւ այն դժբաղդ վիճակի որի մէջ ընկել էր Մայր Աթոռը մի քանի տասնեակ տարիների ընթացքում՝ Ռուսաց տիրապետութիւնից առաջ, ապերախտ յեանորդին այնպէս է թուացել, թէ այստեղ երբէք ոչինչ չի գործուել ու բոլոր գործողները դրսեցիներ են եղել:

Վերջացնելով մեր խօսքը՝ ընթերցողի ուշադրութիւնը կհրաւիրենք երեք կէտի վերայ, որ Պրոֆ. Լ. օօֆս իւր սուր դիտողութեամբ այնպէս որոշ կերպով նկատել ու պարզել է. ա) Մեր եկեղեցւոյ ազգային բնաւորութիւնը, բ) Որ հայերը մի բնութիւն դաւանելով հետևում են միայն ընդհ. եկեղեցւոյ Ե. դարու առաջին շրջանում քարոզած դաւանութեան, և ազանդաւոր միաբնակների հետ ո՛չ մի գործ չունին, գ) Որ բողոքականների և ուրիշ եկեղեցիների Հայերի մէջ ներկայումս արծարծած միսիոնարական գործունէութիւնն անտեղութիւն է: Առանձին շնորհակալութեան արժանի է նա՝ իւր հեղինակաւոր գրչով այսպիսի ուղիղ տեսութիւններ հաստատելուն համար:—Լաւ կլինէր ապա որ նորանից դաս առնէինք, թէ որչափ մեծ արժէք ունի ազգային եկեղեցւոյ իւրաքանչիւր ինքնուրոյն կողմը, և թէ որչափ դատապարտելի է մեր անհաւատարմութիւնն ու տգիտութիւնը, որ կուրօրէն անդի ենք տալիս օտար ազդեցութիւնների և հարազատը կորցնում: